«Հանուն աշխատանքի. Հաշվետու եվ ներառական աշխատաշուկայի նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում իրականացված

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2024

17 ապրիլ

Բովանդակություն

1. Նախաբան 3
2. Ներածություն 4
   2.1. Աշխատաշուկան թվերով 4
3. Աշխատանքային իրավունքի նկատմամբ վերահսկողությունը: 6
   3.1. Պատմական ակնարկ 6
   3.2. Իրավական կարգավիճակն այսօր 8
   3.3. Վերահսկողությունը 9
   3.4. Ստուգումների տարեկան ծրագիր 11
4. Աշխատանքի անվտանգություն, դժբախտ ելքով դեպքեր 13
   4.1. Դժբախտ ելքով դեպքերի վերլուծություն: ՀՀ ՆԳՆ Ոստիկանության տվյալներով .. 13
   4.2. Դժբախտ ելքով դեպքերի վերլուծություն: ՀՀ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տվյալներով 15
   4.3. Դժբախտ ելքով դեպքերի վերլուծություն: Հարցազրույցի արդյունքներ 17
5. Եզրակացական ամփոփում 19
6. Առաջարկություններ 20

1. Նախաբան

Եվրամիության[1] աջակցությամբ, ՏՀՏ գործատուների միության, Արմավիրի զարգացման կենտրոն ՀԿ-ի և Կիրակի հիմնադրամի գործընկերությամբ, 2021թ-ից մեկնարկել է «*Հանուն աշխատանքի. Հաշվետու և ներառական աշխատաշուկայի նախաձեռնություն*» ծրագիրը (այսուհետ Ծրագիր)[2]: Ծրագիրը միտված է նպաստել Հայաստանում աշխատանքային իրավունքների պաշտպանությանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով երիտասարդներին և խոցելի խմբերին: Ծրագիրն իրականացվում է Աշխատանքային օրենսգրքի բարեփոխումներին զուգահեռ, ներառված բարձր տեխնոլոգիական լուծումների, քաղաքացիական հասարակության մոնիտորինգի, քաղաքացիների ներգրավվածության և իրազեկման համադրությամբ: Ծրագրի շրջանակներում մշակված վերլուծությունները, ուսումնասիրությունները՝ ուղղված Հայաստանում աշխատաշուկայի իրավակարգավորումների բարելավմանը, կօգտագործվեն նաև աշխատանքային իրավունքի քաղաքականություն մշակող և վերահսկողություն իրականացնող գերատեսչությունների կողմից :

Այս փաստաթուղթը (հետազոտություն) մշակվել է վերոհիշյալ Ծրագրի շրջանակներում, «Արմավիրի զարգացման կենտրոնի» կողմից Ծրագրի շրաջանակներում հայտարարված կրթաթոշակի միջոցներով, «Հանրային Ասսամբլեա» սոցիալ-քաղաքացիական հասարակական կազմակերպության (ՀԿ) կողմից: Հետազոտությունն անդրադարձել է Հայաստանում աշխատանքային իրավունքների միայն կարևոր ասպեկտներին՝ կենտրոնանալով կորպորատիվ սոցիալական պատասխանատվության գործելակերպի, աշխատողների ապահովագրության արդյունավետության, ***մասնավորապես՝ աշխատավայրի անվտանգության*** և մարգինալացված խմբերի իրավունքների պաշտպանության վրա: Փաստաթղթում հատուկ սևեռում է արվել աշխատանքի անվտանգության, աշխատավայրում դժբախտ դեպքերին և դրանց նկատմամբ վերահսկողական տվյալներին:

Հետազոտությունն իրականացվել է ինչպես բաց աղբյուրներում առկա ինֆորմացիայի, այնպես էլ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի, ՀՀ ՆԳՆ Ոստիկանության կողմից հարցումներին ի պատասխան տրամադրված տվյալների, ՀՀ-ում գործող իրավական ակտերի վերլուծություն հիման վրա:

[1] Այս փաստաթղթում ներկայացված տեսակետները, կարծիքներն ու եզրակացությունները, պարտադիր չէ, որ համընկնեն Եվրամիության կարծիքի հետ:


[2] EU project page – EU for Armenia (eu4armenia.eu)

2. Ներածություն

2.1. Աշխատաշուկան թվերով

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի վերջին տվյալների, 2023թ-ի նոյեմբերի տվյալներով[3], Հայաստանում գրանցված աշխատողների քանակը հասել է 742,941-ի: Գրանցված աշխատողների թիվը կայուն աճ է գրանցում վերջին տարիներին: Ամփոփված տվյալների համամետությամբ 2022թ-ի դեկտեմբեր ամսվա 708,906 գրանցված աշխատողների համեմատ 2023թ-ի դեկտեմբերին (նախնական ամփոփված թիվ) եղել է 745,207 վարձու աշխատող, այսինքն մոտ 5 տոկոս աճ է գրանցվել:


Այս փաստաթղթում առավել խոցելի աշխատանքային ոլորտներին անդրադառնալիս, առանձին վերլուծության է արժանի դիտարկել Հայաստանում գրանցված աշխատողների քանակներն ըստ գործատուների գործունեության ոլորտների: Եթե մեծ խմբերով դիտարկենք, ապա հենվելով նույն վերոհիշյալ աղբյուրին 742,941 վարձու աշխատողներից մեծ խումբը՝ 214,883 աշխատող, ներգրավված են եղել պետական հատվածում, իսկ առավել շատ աշխատողներ՝ 125,596, ներգրավված են եղել (G) Մեծածախ և մանրածախ առևտրում.



[3] sv_12_23a_142 (armstat.am)

Ուսումնասիրելով ամենամեծ աշխատողներ գրանցած ոլորտները, արձանագրում ենք, որ դրանցից (Р) կրթության ոլորտում 123,654 աշխատողներից 112,349 -ը պետական հատվածի աշխատողներ են՝ 90,8%-ը :


Գրանցված աշխատողների վերլուծությունն ըստ **սեռի** ցույց է տալիս, որ իգական սեռի ներկայացուցիչները 2023թ-ի տարեվերջին մոտ 20,000 ով ավելի են եղել քան՝ արականը: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2023թ-ի դեկտեմբեր ամսվա տվյալների (նախնական) ՀՀ-ում գրանցված 745,207 աշխատակիցներից 382,618 աշխատակից եղել են իգական սեռի ներկայացուցիչներ, իսկ 362,589-ը՝ արական սեռի: Այստեղ ևս, իգական սեռի ներկայացուցիչ վարձու աշխատողների ամենամեծ խումբը ներգրավված են եղել կրթության ոլորտում՝ 94,240, երկրորդ տեղում առևտրի ոլորտն է՝ 61,835 հոգի:



Չնայած նրան, որ վերջին տարիներին ամենաշատ աշխատողներ կլանած ոլորտները առևտուրն ու ծառայություններն են, 2022թ-ի նկատմամբ 2023թ-ին ամենամեծ աշխատեղերի աճ նկատվել է գյուղատնտեսության և շինարարության ոլորտներում: Մեծ խմբերով եթե դիտարկենք գյուղատնտեսության ոլորտում 2022թ-ի տարեվերջին գրանցված են եղել 9,160 աշխատակից, իսկ 2023թ-ի տարեվերջին 11,636: Երկրորդ ամենամեծ աճը գրանցել են շինարարության ոլորտի աշխատատեղերը՝ 2022թ-ի 28,585-ից աճել է 2023թ-ին գրանցելով 34,472 աշխատատեղ:

Աշխատատեղերն ըստ մարզային բաշխվածության նույն գերկենտրոնացված պատկերն ունեն, ինչ Հայաստանում գործունեություն ծավալող կազմակերպությունները կամ բնակչության գերկենտրոնացումը մայրաքաղաք Երևանում: Այսպես, 2023թ-ի

տարեվերջյան ցուցանիշների համաձայն, մոտ 740 հազար գրանցված աշխատատեղերից 521 հազար աշխատատեղը (մոտ 70%-ը) բաժին է ընկել Երևանին: Երկրորդ և հաջորդիվ ամենաշատ աշխատատեղերը գրանցել են Կոտայքի՝ 38,995 մարդ, Լոռվա՝ 28,316 մարդ, Արարատի՝ 27,285 մարդ, մարզերը.



3. Աշխատանքային իրավունքի նկատմամբ վերահսկողությունը:

3.1. Պատմական ակնարկ

Հայաստանում ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նկատմամբ որպես պետական վերահսկողություն իրականացնող մարմին գործել է դեռևս 2004թ-ից՝ «Աշխատանքի պետական տեսչություն» (ԱՊՏ) անվամբ: Այս կառույցի գործունեությունը հիմնականում կարգավորվել է հենց «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքով [4], որը գործել է 2005թ-ից և ուժը կորցրել 09.01.2015թ-ից:

Անկախ առանձին օրենքի առկայությունից ԱՊՏ-ն գործում էր որպես լիազոր մարմնի (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության) առանձնացված ստորաբաժանում:

ՀՀ կառավարության 2013թ-ի հուլիսի 25 թիվ 857-Ն[5] որոշմամբ, ԱՊՏ-ն միաձուլման ձևով վերակազմակերպվել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի

[4] https://www.arlis.am/documentview.aspx?docID=59595

[5] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=115141

Առողջապահական պետական տեսչության: Դրանով կարելի է ասել դադարել է հիմնական աշխատանքային իրավունքի նկատմամբ պետական վերահսկողական գործառույթը:

Նոր ձևավորված տեսչության գործառույթներում աշխատանքային իրավունքի նկատմամբ հսկողության միայն աշխատանքի վայրում առողջության և անվտանգության պահպանման գործառույթն է թողնվել:

Տվյալ տեսչության կանոնադրությունը սահմանվել է վերոհիշյալ 857-Ն որոշման Հավելված 1-ով, որն էլ սակայն ուժը կորցրած է ճանաչվել 27.04.2017թ-ի ՀՀ կառավարության թիվ 444-Ն[6] որոշմամբ: Այս որոշման հիմքում դրվել է արդեն «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքը[7], որն ընդունվել է 2014թ-ի դեկտեմբերին: Այս օրենքով սահմանվել են ընդհանրապես տեսչական մարմինների իրավական կարգավիճակը, դրանց ստեղծման, գործունեության կազմակերպման առանձնահատկությունները:

Վերոհիշյալ թիվ 444-Ն որոշմամբ տեսչությունը շարունակեց գործել որպես Առողջապահության կազմում գործող առողջապահական տեսչական մարմին՝ աշխատանքային իրավունքի վերահսկողության նախկինում գործող սահմանափակ գործառույթով միայն:

Ընդամենը մեկ տարի հետո, 08 հունիսի 2018թ-ի ՀՀ կառավարության թիվ 705-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել վերոհիշյալ թիվ 444-Ն որոշումը:

Այսօրվա գործող ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (**ԱԱՏՄ**) կանոնադրությունը հաստատվել է 11 հունիսի 2018թ-ի ՀՀ վարչապետի թիվ 755-Ն[8] որոշմամբ:

Իսկ ամբողջական աշխատանքային իրավունքի նկատմամբ վերահսկողության լիազորությունը օրենքով վերականգնվել է ավելի ուշ՝ 2019թ-ի դեկտեմբերի 4-ի «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով, որով տվյալ օրենքի 33-րդ հոդվածով սահմանվեց, որ *գործատուների կողմից աշխատանքային օրենադրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է ոլորտի լիազորված տեսչական մարմինը* (ԱԱՏՄ)՝ օրենքով նախատեսված դեպքերում կիրառելով պատասխանատվության միջոցներ: Այս դրույթի ուժի մեջ մտնելու ժամկետը սակայն սահմանվել էր ավելի ուշ՝ **2021թ-ի հուլիսի 1**:

[6] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=113099

[7] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=95028

[8] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=185394

Այս փոփոխություններին զուգահեռ ՀՀ կառավարության մի շարք որոշումներով (2019-2020թթ) սահմանվեց նաև ԱԱՏՄ-ն որպես ոլորտի վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին:

Ամփոփելով, վերոհիշյալ միայն համառոտ պատմական ակնարկը, Հայաստանում աշխատանքային իրավունքի պետական վերահսկողության մասով, արձանագրում ենք, որ 2004թ-ից մինչև 2021թ-ի հուլիս, այստեղ մենք ունեցել ենք անընդհատ փոփոխություններով ուղեկցվող իրավական և տրանսֆորմատիվ գործընթաց, որն էլ իր հերթին չէր կարող նպաստել տվյալ ոլորտի վերահսկողության ինստիտուցիոնալ զարգացմանն ու ամրապնդմանը:

Ավելին, նման երկարատև փոփոխություններն անառողջ միջավայրի առիթ են հանդիսացել նաև հենց գործատուների մոտ: Վերջիններիս մոտ այս փոփոխությունների ընթացքում վերահսկողություն իրկանացնում էին հարկային մարմինները, այն էլ միայն աշխատողների գրանցված լինել/չլինելու փաստի առիթով: Հարկային մարմինները լիազորություն չունեին վերահսկողություն իրականացնելու աշխատողի և գործատուի միջև փոխհարաբերությունները կարգավորող իրավական ակտերի շրջանակներում, հետևաբար այս տարիներ ձգվող պատկերը բերել է նաև աշխատանքային հարաբերությունների կոպիտ խախտումների խորացման և անպատժելիության միջավայրի:

Մյուս օղակը, որը ծանրաբեռնված է եղել խախտված աշխատանքային հարաբերությունները քննելով, եղել է դատական համակարգը, որն էլ իր ծանրաբեռնվածությունից ելնելով՝ երկարատև և ծախսատար պրոցեսներով, կարելի է համարել ոչ արդյունավետ:

3.2. Իրավական կարգավիճակն այսօր

Ինչպես արդեն ներկայացվեց վերոգրյալ, աշխատանքային օրենսդրության պահանջների նկատմամբ վերահսկողության իրականացումը՝ այդ թվում աշխատանքի վայրում դժբախտ դեպքերի ու մասնագիտական հիվանդությունների հաշվառման և քննման՝ ՀՀ կառավարության սահմանած կարգի պահպանման և օրենքով սահմանված կարգով վնասի հատուցման ենթակա գումարների ժամանակին վճարման նկատմամբ վերահսկողության, վերապահված է ՀՀ կառավարության ենթակա Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին (ԱԱՏՄ):

Վերահսկողությունն իրականացվում է առաջնորդվելով տեսչական մարմինների գործունեությունը կարգավորող, ստուգումների կազմակերպման և անցկացման, վարչարարության հիմունքների և վարչական վարույթի և այլ ոլորտային օրենքների, վարչական օրենսգրքի, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից հաստատված որոշումների (այդ թվում ոլորտային ստուգաթերթերի) և այլ իրավական ակտերով[9]:

[9] https://www.hlib.am/laws/

Միևնույն ժամանակ սակայն, ԱԱՏՄ-ն վերահսկողությունն իրականացնում է ոչ միայն աշխատանքային իրավունքի ոլորտում, այլ ընդհանուր առմամբ հիմնական 4 ուղղություններով՝

- Դեղերի շրջանառության վերահսկողություն.
- Բժշկական օգնության և սպասարկման վերահսկողություն.
- Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողություն.
- Աշխատանքային օրենսդրության՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառներում, վերահսկողություն.

Հայաստանը, բացի իր տեղական կարգավորումներից, ունի ստանձնած պարտավորություն նաև այս ոլորտում՝ աշխատանքային անվտանգության վերահսկողության կիրառության և ուժեղացման, իրականացնելու կարգավորումներ որոնք կբխեն կամ համահունչ կլինեն ոլորտի **միջազգային կանոններին**: Մասնավորապես Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO) «Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին» թիվ 81 Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո, Հայաստանը պարտավորություն է ստանձնել, 2005 թվականից սկսած, ունենալ աշխատանքի տեսչություն առնվազն երկու ոլորտների համար՝ արդյունաբերական և առևտրի ձեռնարկություններում:

Թեև, այսօր կարող ենք արձանագրել, որ սկսած 2021թ-ի հուլիսի 1-ից Հայաստանում արդեն գործում է աշխատանքային իրավունքի նկատմամբ լիարժեք վերահսկողությամբ օժտված կառավարությանը ենթակա տեսչական մարմին՝ ԱԱՏՄ-ն, սակայն վերոհիշյալ կոնվենցիայով սահմանված մի շարք կարգավորումներ, որոնք աշխատանքի անվտանգության ոլորտում ավելի ճկուն և ազատ գործառույթներ են օժտվում այս ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսուչին, տեսչական մարմնի ղեկավար կազմին, դեռևս տրված չեն վերահսկողություն իրականացնող մարմնին:

3.3. Վերահսկողությունը

ԱԱՏՄ-ն իրեն վերապահված լիազորությունների շրջանակում հիմնական վերահսկողությունն իրականացնում է պլանային ստուգումների միջոցով: Տարեկան պլանային ստուգումների պլանը հաստատվում է ԱԱՏՄ-ի կառավարման խորհրդի կողմից և ցանկը հրապարկվում է ԱԱՏՄ-ի պաշտոնական կայքում, մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 1-ը՝ հաջորդ տարվա համար:

Տարեկան ստուգումների պլանում ընդգրկվում են այն տնտեսավարողները, որոնք ըստ ՀՀ կառավարության 2019թ-ի օգոստոսի 22-ի թիվ 1124-Ն որոշմամբ[10] սահմանված չափորոշիչներով համարվում են ռիսկային (ըստ ռիսկայնության աստիճանի՝ բարձր, միջին,

[10] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=157973

ցածր) և համապատասխան բալային համակարգով հայտնվում տարեկան ստուգումների պլանում:

Ըստ վերոհիշյալ որոշման, տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնությունը հաշվարկվում է որպես տնտեսավարող սուբյեկտի ոլորտային և անհատական ռիսկերի հանրագումար, որն ունի առավելագույնը 200 միավոր ընդհանուր կշիռ: Ոլորտային ռիսկը տնտեսավարող սուբյեկտի ***գործունեության ոլորտների*** հետ կապված ռիսկի չափանիշ է, որը հաշվարկելիս հիմք են ընդունվում տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտի կարևորությունն ու վտանգավորությունը՝ ըստ տվյալ գործունեությունից առաջացող հնարավոր բացասական հետևանքների՝ հաշվի առնելով այդ վնասի ծանրության աստիճանը: Եթե տնտեսավարող սուբյեկտը գործունեություն է իրականացնում մի քանի ոլորտներում, ապա ոլորտային ռիսկը հաշվարկվում է ամենառիսկային ոլորտի տվյալներով:

Անհատական ռիսկը տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտների հետ կապված ռիսկի չափանիշ է, որը հաշվարկելիս հիմք են ընդունվում տնտեսավարող սուբյեկտի կողմից օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումները, խախտումների պարբերականությունը, խախտումների վերացմանն ուղղված գործողությունները, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտի գործունեությունը բնութագրող այլ չափանիշները:

Աշխատողների անվտանգության տեսանկյունից վերոհիշյալ կառավարության որոշմամբ, որպես ամենաբարձր ռիսկային գործունեության ոլորտ սահմանվել է (B) *Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործումը*, որպես ոլորտային ռիսկի միավոր սահմանելով 100 միավոր: Ստորև աղյուսակում ամենառիսկային գործունեության ոլորտներն են իրենց միավորներով.

Կոդ	Գործունեության տեսակը	Միավորը
B	Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	100
C	Մշակող արդյունաբերություն (բացառությամբ C21)	90
F	Շինարարություն	70
D	Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	50
J	Տեղեկատվություն և կապ	50
E	Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	40
G	Մեծածախ և մանրածախ առևտուր. ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում (բացառությամբ G46.46.2, G47.73)	40
C21	Դեղագործական արտադրանքի արտադրություն	30
O	Պետական կառավարում և պաշտպանություն. պարտադիր սոցիալական ապահովություն	10
P	Կրթություն	10
Q	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	10
R	Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	10

S	Սպասարկման այլ ծառայություններ	10
	Եվ այլն	

Նման տրամաբանությամբ ոլորտային ռիսկային միավորներ սահմանված են նաև աշխատանքային իրավունքի ռիսկը հաշվարկելու համար:

Իսկ **անհատական ռիսկի** բարձր միավորներ հավաքելու համար էական ազդեցություն են ունենում տվյալ տնտեսավարողի մոտ աշխատակիցների քանակը՝ օրինակ 200-ից ավելի աշխատակից ունեցող տնտեսավարողը վաստակում է 10 միավոր, սեռատարիքային բաշխվածությունը՝ այստեղ բարձր ռիսկային միավորներ տրվում է այն տնտեսավարողներին, որոնց մոտ մինչև 18 տարեկան աշխատակիցների քանակը մեծ է ընդհանուրի նկատմամբ, կամ իգական սեռի աշխատակիցները քանակն է մեծ կշիռ կազմում ընդհանուր աշխատակիցների նկատմամբ:

Անհատական ռիսկի միավորների վրա ազդեցություն է ունենում նաև տվյալ տնտեսավարողի մոտ նախորդ տարի արձանագրված խախտումները և իհարկե դժբախտ դեպքերի քանակը: Բնական է մահվան ելքով դեպքեր լինելու դեպքերում տվյալ տնտեսավարողը վաստակում է բարձր ռիսկային միավորներ:

Ի վերջո ոլորտային և անհատական ռիսկերի հանրագումարը եթե մոտ 200-ի ապա տվյալ տնտեսավարողը առավել ռիսկային է և հայտնվում է հաջորդ տարվա ստուգումների ցուցակում:

Այս բաժնում ներկայացված ռիսկերի հաշվարկի համար կարևոր նշնակություն ունեն դրանց համար հիմք հանդիսացող տվյալների նախօրոք հավաքագրումն ու հաշվարկումը: Դրանց ահռելի մասը հայցվում է այլ գերատեսչություններից առնվազն ամենամյա պարբերականությամբ: Համաձայն գործող օրենսդրության տեսչական մարմինը ռիսկի գնահատման համար իրականացնում է տնտեսավարող սուբյեկտների տվյալների բազայի ձևավորում և պարբերաբար թարմացում՝ ըստ ոլորտային և անհատական ռիսկայնության չափանիշների:


3.4. Ստուգումների տարեկան ծրագիր

Ինչպես արդեն ներկայացված է նախորդ բաժնում, ստուգումների տարեկան ծրագիրը մշակվում և հաստատվում է ԱԱՏՄ կառավարման խորհրդի կողմից յուրաքանչյուր հաջորդ տարվա համար և հրապարակվում ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը: Եթե փորձենք վերլուծել ԱԱՏՄ տարեկան ստուգումների ծրագրով հաստատված ցանկերը և հատուկ ընդգծենք աշխատանքի անվտանգության ոլորտում ներառվածները, ապա պատկերը կստացվի հետևյալն է՝

2021թ-ի համար տարեկան ստուգումների պլանում ընգրկված են եղել 241 տնտեսավարող, որից անվտանգության ոլորտի տնտեսավարողների մոտ ստուգում իրականացվել է՝ 29-ի մոտ:

2022թ-ի համար տարեկան ստուգումների պլանում ընդգրկված են եղել 647 տնտեսավարող, որից անվտանգության ոլորտի տնտեսավարողների ստուգում՝ 163-ի մոտ, այդ թվում ահամատեղ այլ ոլորտների հետ:

2023թ-ի համար տարեկան ցուցակը բաղկացած է եղել 712 տնտեսավարողներից, որից անվտանգության ոլորտի տնտեսավարողների ստուգում՝ 185-ի մոտ, այդ թվում համատեղ այլ ոլորտների հետ ստուգումները:



2021թ-ի տարեկան ստուգումների քանակի նկատմամբ տարեկան ստուգումների կտրուկ աճը պայմանավորված է հենց վերոհիշյալ օրենսդրական փոփոխություններով՝ 2021թ-ի հուլիսի 1-ից աշխատանքային իրավունքի նկատմամբ նոր վերահսկողության լիազորության սահմանումը, որն արդեն թույլ տվեց 2022թ-ից և հաջորդ տարիներին ստուգումների տարեկան ցուցակներում ներառել այն տնտեսավարողներին, որոնք ռիսկային են աշխատանքային իրավունքի տեսանկյունից:

Ամփոփելով այս բաժինը, տարեկան պլանային ստուգումների պատկերը աշխատանքի անվտանգության տեսանկյունից վերջին երեք տարիներին միջինացված թվերով, ստացվում է որ ԱԱՏՄ-ի տարեկան պլանային ստուգումների 23-ից 25 տոկոսը անվտանգության ոլորտի տնտեսավարողներն են ընդգրկված:

Ծանոթագրություն: *Բացի վերոգրյալ տարեկան պլանային ստուգումներից, ԱԱՏՄ-ն իրականացնում է ըստ անհրաժեշտության ստուգումներ՝ սեփական նախաձեռնությամբ, կամ դիմում-բողոքների հիման վրա, ինչպես նաև նախորդ տարիներից եկող տրված հանձնարարականների վերստուգումներ, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ կամ դիմում-բողոքներով վարչական վարույթներ, որոնք որպես կանոն քանակային շատ մոտ են տարեկան պլանային վերահսկողական միջոցառումների քանակին :*

4. Աշխատանքի անվտանգություն, դժբախտ ելքով դեպքեր

4.1. Դժբախտ ելքով դեպքերի վերլուծություն: ՀՀ ՆԳՆ Ոստիկանության տվյալներով


Այս հետազոտության շրջանակներում պաշտոնական հարցումներ են ուղղվել ԱԱՏՄ, ՀՀ ՆԳՆ ոստիկանություն, որպեսզի հնարավորինս ավելի ճշգրիտ տեսնենք դժբախտ ելքով դեպքերի պատկերը Հայաստանում: Ըստ ՀՀ ՆԳՆ Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տրամադրված պաշտոնական գրության, էական աճ է գրանցվել դժբախտ ելքով դեպքերի թվերի, ցավոք նաև դրանց արդյունքում մահվան ելքով և ծանր հետևանքով դեպքերի մասով:

Նշված տեղեկատվությունը տրամադրվել է սույն հետազոտության համար, ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածների, որոնց վերլուծության արդյուքնում պարզ է դառնում, որ աշխատանքի անվտանգության ամենահաճախ հանդիպող դժբախտ ելքով դեպքերը արձանագրվել են Ոստիկանության կողմից հենց **Շինարարության** և **Հանքարդյունաբերության** ոլորտներում: Ներկայացված տեղեկատվության համաձայն քրեական օրենսգրքի ամենահաճախ խախտված հոդվածներն այս մասով հետևյալն են.

Հոդված 355. *Շինարարական, լեռնահանքային կամ այլ աշխատանքների կատարման ընթացքում աշխատանքի պաշտպանության կամ անվտանգության ապահովման կանոնները կամ պահանջները խախտելը...*:

Հոդված 356. *Պայթյունավտանգ օբյեկտներում անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնները կամ պահանջները խախտելը...*:

Հոդված 357. *Հրդեհային անվտանգության կանոնները կամ պահանջները խախտելը...*:



Առավել մտահոգիչ է, որ վերոհիշյալ ՔՕ-ի հոդվածներով արձանագրված դեպքերից աճ է գրանցվել նաև այդ դեպքերից մահվան ելքով և ծանր հետևանքով դեպքերի թիվը: Մասնավորապես .

ՔՕ-ի հոդվածները, որոնցով արձանագրվել են աշխատանքի անվտանգության խախտումների դեպքեր:	**2021**	**2022**	**2023**
355 Հոդված: ***Շինարարական,*** ***լեռնահանքային*** *կամ այլ աշխատանքների կատարման ընթացքում աշխատանքի պաշտպանության կամ անվտանգության ապահովման կանոնները կամ պահանջները խախտելը*			
Ընդհանուր քանակը՝	3	73	181
Որից մահվան ելքով կամ ծանր հետևանքով դեպքերը՝	**1**	**14**	**39**
356 Հոդված: *Պայթունավտանգ օբյեկտներում անվտանգության կամ աշխատանքի պաշտպանության կանոնները կամ պահանջները խախտելը*			
Ընդհանուր քանակը՝	0	1	2
Որից մահվան ելքով կամ ծանր հետևանքով դեպքերը՝	**0**	**1**	**0**
357 Հոդված: *Հրդեհային անվտանգության կանոնները կամ պահանջները խախտելը*			
Ընդհանուր քանակը՝	2	2	9
Որից մահվան ելքով կամ ծանր հետևանքով դեպքերը՝	**1**	**1**	**5**

Հաշվի առնելով 2023թ-ին տեղի ունեցած կառուցվածքային փոփոխությունները ոստիկանական համակարգում, այսուհետ քրեական գործերով ավելի համապարփակ վերլուծություններն իրականացվելու են քննչական մարմինների կողմից: Սակայն որպես դեպքի արձանագրման, այս մանդատի առաջին օղակ, շարունակում է մնալ ոստիկանությունը, որն առաջինն է որը ցանկացած բուժ-հաստատությունում դեպքը գրանցվելուց հետո արձանագրում է դեպքը և ուղղորդում հետագա գործընթացի՝ բացառությամբ ԱԱՏՄ-ի:

4.2. Դժբախտ ելքով դեպքերի վերլուծություն: ՀՀ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տվյալներով

Այս հետազոտության շրջանակներում ԱԱՏՄ-ից պաշտոնական հարցված տվյալների համաձայն, ՀՀ ոստիկանության կողմից վերոհիշյալ բաժնում ներկայացված դժբախտ դեպքերի քանակը չեն համընկնում ԱԱՏՄ-ի կողմից այդ ոլորտում իրականացված վերահսկողական միջոցառումների թվի հետ: Եթե համեմատենք նախորդ բաժնում նշված ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից տրամադրված ամենաբարձր 2023թ-ի ցուցանիշը՝ 181 դեպք, ապա միևնույն ժամանակաշրջանում ԱԱՏՄ-ն այլ պետական մարմիններից ստացել է ընդամենը 3 գրություն, իսկ ընդհանուր տվյալ տարում հանրագումարային 28 դեպքով է հարուցվել վարչական վարույթներ և իրականացվել վերահսկողական միջոցառում՝

#	Դժբախտ դեպքերով պայմանավորված դիմում-բողոքների քանակ	Դժբախտ դեպքերով պայմանավորված սեփական զեկուցագրերի քանակ	Դժբախտ դեպքերով պայմանավորված այլ պետական մարմիններից ստացված գրությունների քանակ	Դժբախտ դեպքերով պայմանավորված հարուցված վարույթների, կամ ըստ անհրաժեշտության ստուգումների քանակ	Դժբախտ դեպքերով պայմանավորված առաջադրվել է տուժանք լ է/կարգադրագի (քանակ)
2021	0	2	31	**33**	25/25
2022	3	8	9	**20**	10/10
2023	3	21	4	**28**	20/17

Այս տվյալները վերլուծելիս մտահոգիչ է այն որ առնվազն վերոհիշյալ երկու գերատեսչության տվյալների միջև էական շեղում է առկա: Մասնավորապես, եթե օրինակ համեմատենք 2023թ-ի ՆԳՆ ոստիկանությունում ՀՀ ՔՕ-ի միայն 355-րդ հոդվածով արձանագրված դեպքերը եղել են **181**, իսկ ԱԱՏՄ-ի տվյալներով «*Դժբախտ դեպքերով պայմանավորված այլ պետական մարմիններից ստացված գրությունների քանակ*» տվյալը ընդամենը **4**-ն է:

Մյուս տվյալները որը տրամադրել է ԱԱՏՄ-ն, վերաբերում է տարեկան ստուգումների պլանը կազմելիս վերլուծվող տնտեսավարողների քանակին և դրանց ընդգրկումը տարեկան ստուգումների պլանում, վերահսկողությունն ու տուժանքի ներկայացումը:

Ըստ որի, եթե միայն 2023թ-ի համար դիտարկենք, ապա ստացվում է որ ահռելի քանակի տվյալներ են վերլուծվում, սակայն պլանային ստուգումների ցանկում հայտնվում են շատ ավելի քիչ ստուգվողներ: Դա իհարկե պայմանավորված է վերոհիշյալ ռիսկերի հաշվարկման մեթոդաբանության և կիրառության հետ, որից հետո արդեն, լրացուցիչ, սեփական նախաձեռնությամբ վերահսկողության ակտիվությունը մնում է ԱԱՏՄ-ի ներքին կամքի և կարողություններից կախված:

Ստորև ներկայացնում ենք ընդամենը մի քանի ռիսկային ոլորտների վերլուծությունն ու դրանց արդյունքները 2023թ-ի համար տրամադրված.

#	Վերլուծված կազմակերպությունների ՏԳՏԴ-երի (քանակն ըստ ՏԳՏԴ ների)	Վերլուծված Կազմակերպությունների քանակը	Հայտնվել են ստուգումների տարեկան ծրագրում (քանակ)	Ընթացիկ տարում ստուգվել են (քանակ)	Ստուգման արդյունքում խախտումներ հայտնաբերվել են (քանակ)	Ստուգման արդյունքում տուժանք առաջադրվել է/կարգադրագիր է տրվել (քանակ)
1	(**B**) Հանքարդյունաբերություն	374	**124**	118	85	**76/76**
2	(**C**) Մշակող արդյունաբերություն	14481	**44**	44	38	**34/34**
3	(**F**) Շինար-թյուն	3219	**55**	55	51	**49/44**

Եթե համեմատենք միայն աշխատանքի անվտանգության ոլորտի առավել ռիսկային այս երեք ոլորտներում գործող տնտեսավարողների քանակը՝ **18074**, և դրանցից տարեկան

ստուգումների ցանկում ընդգրկվածները՝ **223**, ապա ստացվում է, որ ԱԱՏՄ-ն, ըստ գործող կարգերի, տարեկան վերլուծվող միայն այս երեք ռիսկային ոլորտի տնտեսավարողների **1,2** տոկոսն է ընդգրկում պլանային ստուգումների ցանկում:

Ծանոթագրություն:

Ըստ ԱԱՏՄ-ի պաշտոնական տվյալների սույն հետազոտության մշակման ընթացքում ԱԱՏՄ-ի առավելագույն *հաստիքների քանակ է սահմանված* **339**-ը:

Իսկ աշխատանքի իրավունքի վերահսկողության համար հաստիքների քանակն ընդամենը **89**-ը, որից *միայն աշխատանքի անվտանգության ոլորտի տեսուչների* հաստիքները **39**-ն են

4.3. Դժբախտ ելքով դեպքերի վերլուծություն: Հարցազրույցի արդյունքներ

Այս հետազոտության շրջանակներում, աշխատանքի անվտանգության վերահսկողության ոլորտի խնդիրների շուրջ զրուցել ենք նաև ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի «Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության» բաժնի պետ պարոն Աշոտ Հարությունյանի հետ:

Առաջին խնդիրը, որը քննարկվել է զրույցի ընթացքում, դա կանխարգելիչ միջոցառումներն են, օրինակ պարտադիր բժշկական զննություն պահանջը, որը ՀՀ կառավարության կողմից սահմանված է (թիվ 1089 որոշում[11]) կոնկրետ աշխատանքների համար: Այսինքն սա այն աշխատատեղերն են որտեղ աշխատանքի անցնելիս պետք է պարտադիր անցնել նախնական հետո նաև պարբերական բուժ-զննություն անցնի աշխատակիցը: Այս նորմով սահմանված է, որ յուրաքանչյուր տարի ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը, որոշմամբ սահմանված աշխատատեղեր ունենալու դեպքում, պետք է ԱԱՏՄ-ի հետ համաձայնեցնեն ցուցակները և իրականացնեն աշխտակիցների բուժ-զննումները: Սա իհարկե կարևոր կանխարգելիչ միջոցառում է, բայց հաշվի առնելով որ այս նորմի համար տուժանքներ սահմանված չեն, կարելի է համարել, որ այն ոչ լիարժեք կարելի է կյանքի կոչել:

Պարոն Հարությունյանի հետ քննարկվեց նաև վերոհիշյալ, իրարից էական տարբերվող թվերը, որոնք արտացոլում են դժբախտ դեպքերը ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում և ԱԱՏՄ-ում: Պարոն Հարությունյանը ևս հաստատեց այդ խնդիրը, որ այդ երկու

[11] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117803

գերատեսչությունները չունեն սահմանված նորմ, որով պարտադիր է որպեսզի Ոստիկանությունը տվյալ դեպքերի մասին շտապ հայտնի նաև ԱԱՏՄ-ին:

Դրա փոխարեն պարոն Հարությունյանը հայտնեց, որ 2023թ-ի դեկտեմբերի 5-ի ՀՀ առողջապահության նախարարի 65-Ն հրամանի[12] համաձայն, սահմանվել է կարգ, ըստ որի «*Արտադրական վնասվածքների դեպքեր հայտնաբերած բժշկական կազմակերպության ավագ և միջին բուժաշխատողը դրանց մասին շտապ հաղորդում է Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն», պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ ՀՎԿԱԿ)՝ անմիջապես էլեկտրոնային ձևաչափով կամ հեռախոսով, այնուհետև 24 ժամվա ընթացքում տեղեկություն է ներկայացնում արտադրական վնասվածքի դեպքի մասին շտապ հաղորդման քարտի ձևաչափով*» : Նույն այդ հրամանի 7-րդ կետով սահմված է, որ տվյալ տեղեկատվությունը ՀՎԿԱԿ-ը մինչև հաղորդումը ներկայացված օրվա ավարտը, տվյալ տեղեկատվությունը ներկայացնում է նաև ԱԱՏՄ-ին: Այս նորմով որոշ չափով ավելի իրազեկ է դառնում տեսչական մարմինը արդեն տեղի ունեցած արտադրական վնասվածքների մասին, բայց նրանց մասին, որոնք հայտնի են դառնում բժշկական կազմակերպություններին:

Զրույցի ընթացքում դուրս բերվեցին մի քանի խմբային խնդիրներ, որոնք առկա են հենց աշխատանքի անվտանգության ոլորտում վերահսկողական տեսանկյունից:

1. Իհարկե առաջնայիններից էին կադրային ռեսուրսը, դրանց անբավարար քանակը: Գումարած դրան նոր համալրվող կադրերը, որպես կանոն չեն ունենում բավարար գիտելիքներ և ամենակարևորը փորձ տվյալ ոլորտում արագ ինտեգրվելու և աշխատելու համար: Ստացվում է որ հենց ԱԱՏՄ-ում են անցնում անհրաժեշտ աշխատանքային պրակտիկան:
2. Հարությունյանը ևս հաստատեց, որ վերջին շրջանում առավել շատ խախտումներ արձանագրվում են շինարարության ոլորտում: Այստեղ մեծ խմբի խնդիրներից է այն, որ փաստացի տվյալ վայրում աշխատողները ձևակերպված են որպես քաղաքացիաիրավական պայմանագրով ծառայություն մատուցողներ, որն էլ ըստ էության հնարավորություն չի տալիս ԱԱՏՄ տեսուչներին ստուգում իրականացնել աշխատանքային իրավահարաբերությունների շրջանակներում:
3. Հիշատակվեց նաև վերոգրյալ թիվ 81 կոնվենցիայի պահանջներից այն, որ ԱԱՏՄ տեսուչները չունեն լիազորություններ, առանց ծանուցման անակնկալ ստուգումներ, կամ ստուգայցեր անելու: Կամ որ ավելի ակնհայտ խախտում տեսնելիս արագ միջոցառումներ իրականացնելու նորմ:
4. Նշվեց նաև այս ոլորտում տուգանքների կամ այլ սանկցիաներ կիրառելու անհամաչափ լինելը: Օրինակ այն, որ տվյալ ոլորտում մի շարք խախտումների

[12] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=187402

համար սահմանված է ընդամենը 40000 դրամ վարչական տուգանք, որը խիստ անհամաչափ է արված խախտմանը:

5. Վերջին շրջանի ի հայտ եկած խախտումների տեսակ նշվեց օտարերկրացիների մեծ քանակը նորից շինարարության կամ սպասարկման ոլորտում, որտեղ վերջիններս խնդիրներ են ունենում աշխատանքի թույլտվությունների ստացման և առանց դրանց աշխատանքի անցելու նորմերի հետ:
6. Նշվեց նաև մի շարք տեխնիկական կանոնակարգերի բացերը, որոնց մի մասը ուժը կորցրած են ճանաչվել ԵԱՏՄ կանոնակարգերից ելնելով և դեռ կան որոշները, որոնց փոխարեն նորերը չեն լրացվել:

Այս և այլ մի շարք համակարգային խնդիրները, ըստ Հարությունյանի, ներկայացվել են ոլորտի քաղաքականություն մշակող մարմիններին և փորձ է արվում դրանք օրենսդրական լուծումներով ավելի լավարկել այս ոլորտի վերահսկողական լծակները:

5. Եզրակացական ամփոփում

Բնական է, որ այս հետազոտության շրջանակներում ամբողջական անդրադարձ հնարավոր չէր անել Հայաստանում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության, իսկ մասնավորապես այն աշխատողների, որոնք համարվում են ավելի խոցելի խմբերի ներկայացուցիչներ, ոլորտի խնդիրներին: Հաշվի առնելով նախ այն, որ տվյալ ոլրտում դեռևս առկա չէ անհրաժեշտ ամբողջական տվյալների բազան, առանձնացված աշխատողների խմբերի մասով ավելի դժվար է հայթայթել հաճախ հանդիպող խախտումների քանակներն ու պատճառները: Բայց ամփոփելով այս հետազոտության շրջանակներում ձեռք բերված ինֆորմացիան և կատարված վերլուծությունները կարողանում ենք առնվազն արձանագրել.

Ինչպես անդրադարձ կատարվել է արդեն այս փաստաթղթի ներածական բաժնում, աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ոլորտի և ընդհանրապես աշխատանքային իրավունքի նկատմամբ վերահսկողական օղակը տարիներ ի վեր վերակազմավորվել, վերագործարկվել ու ենթարկվել է կառուցվածքային փոփոխությունների: Այս իրավիճակը բերել է նրան, որ հակառակ կողմում՝ գործատուների մոտ, այլևս անհանգստություն չի եղել պահպանելու Հայաստանում գործող աշխատանքային իրավունքի և մասնավորապես աշխատանքի անվտանգության ոլորտում առկա իրավանորմերը: Այսինքն տարիներ ի վեր գործող անպատժելիությունը բերել է ոլորտի անկայունությանը:

Հայաստանում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը՝ ԱԱՏՄ-ն, անհամաչափ ռեսուրսներով է հագեցած քան տվյալ ոլորտում գործող տնտեսավարողներն ու այնտեղ աշխատող մարդիկ: Այստեղ առաջնայինը կարծում ենք, որ ԱԱՏՄ-ին հատկացված

հաստիքների քանակն ու տեղաբաշխվածությունը ամբողջ երկրով չեն համապատասխանում այս օրերին կտրուկ աճ գրանցած գործունեության այնպիսի ոլորտներում ինչպիսիք շինարարությունն է, և այստեղ հանդիպող խախտումների աճը:

Շարունակում է խնդրահարույց մնալ միջազգային, մասնավորապես 81-րդ կոնվենցիայի պահանջների և Հայաստանում գործող նորմերի միջև անհամապատասխանությունը, որն ավելի ճկուն և ուժեղ կդարձնի տեսչական գործառույթները:

Առկա են մի շարք օրենսդրական բացեր, թե տեխնիկական կանոնակարգերի և թե ոլորտում ռիսկերի հաշվարկման և ընտրման նորմերում: Վերոգրյալ վերլուծությունները ցույց են տալիս, որ նույնիսկ գործող նորմերով անհամաչափ են տվյալ ոլորտի վերլուծված տնտեսավարողների քանակն ու տարեկան ստուգման ցանկերում ընգրկվածները:

Արձանագրվել է նաև տուժանքի սանկցիաների անհամաչափությունը կատարված խախտումների նկատմամբ: Որոնք ևս վերանայման կարիք ունեն:

Կանխարգելիչ միջոցառումները ևս՝ նախնական և պարբերաբար բուժ-զննությունների նորմը, իրազեկվածության պարտադիր նորմերը և այլն, կարիք ունեն վերանայման:

Այս փաստաթղթում անդրադարձը այն մասին, որ առկա արդեն խախտումների մասին տվյալները, երբեմն անպատիժ են մնում միջգերատեսչական ինֆորմացիաների պարտադիր փոխանակման և օպերատիվ տվյալների փոխադարձ տրամադրման մեխանիզմների բացակայության պատճառով:

Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ոլորտում կադրերի պատրաստման կրթական ծրագրերի բացակայությունը, ինչպես նաև պարտադիր վերապատրաստման առկա պետական ծրագրերում:

6. Առաջարկություններ

Այս հետազոտության շրջանակներում այս բաժնում ներկայացված առաջարկությունները չեն կարող կրել պարտադիր կիրառության բնույթ, այլ հանդիսանում են սույն փաստաթղթի որպես ամփոփիչ և խորհրդատվական մաս:

Հայաստանում աշխատանքային իրավունքի (այդ թվում աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման) վերահսկողության լիազորությունների վերագործարկումը պետք է ուղղորդվի այդ ոլորտում ավելի մեծ ռեսուրսների ներգրավվմամբ: Այդ թվում կադրային, նոր թվային լուծումներով, իրազեկման մեծ արշավներով և իհարկե կանխարգելիչ նոր միջոցառումների իրականացումով: Կարծում ենք որ լուրջ հաշվարկման կարիք կա համեմատելու՝ Հայաստանում աճող աշխատատեղերին զուգահեռ (այդ թվում արագ աճող օտարերկրյա աշխատող միգրանտների թվի աճը) այդ ոլորտում վերահսկողական կարողությունների համաչափությունը: Կարողություններ

ասելիս նկատի չունենք միայն կադրային քանակի և հագեցվածության աճը, այլ տվյալ ոլորտում նորարական թվային գործիքների ներդրումը, օրենսդրական դաշտի բարելավումը դրանք իրականացնելու համար: Այս համատեսքտում բնական է, որ բացի պետական բյուջեից հնարավոր է նաև աջակցություն ստանալ միջազգային և դոնորական համայնքից, որոնց համար ևս կարևոր է Հայաստանում աշխատանքի անվտանգ միջավայրն ու արժանապատիվ աշխատանքը:

Կարևոր է նաև մշտապես փորձի փոխանակումը աշխարհում այս ոլորտում արդեն իրականացված բարեփոխումների մասով: Առավել արդյունավետ է լինում միջազգային կառույցների համագործակցությամբ տեսուչների փորձի փոխանակման, քաղաքականություն մշակողների փորձի փոխանակման այցերն ու արտագնա սեմինարները: Պրակտիկ դաշտում գործողությունների դիտարկումն ու մասնակցությունը:

Այս ոլորտում գործող իրավական դաշտը ևս լուրջ վերանայման կարիք ունի: Հաշվի առնելով վերջին փոփոխությունները և վերահսկողություն իրականացնող մարմնի մոտ արդեն առկա վիճակագրական և պրակտիկ դաշտից հավաքագրված տվյալները, կարիք կա վերանայելու թե ռիսկերի մեթոդաբանությունը, թե վերահսկողական միջոցառումների համար տրված լիազորություններն ու դրանց անկատարությունը և թե իհարկե տուժանքների և սանկցիաների համաչափությունը:

Կանխարգելիչ, այդ թվում իրազեկման, միջոցառումներ իրականացնելու մեծ անհրաժեշտություն կա: Այստեղ ևս պետք է դիտարկել այս պահին առկա մեխանիզմները և դրանց արդյունավետությունը: Կարծում ենք լավագույն եղանակը կլինի ներդնելու մի շարք թվային գործիքներ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու և դրանց խախտման դեպքերի մասով ոչ թե ստուգումներ այլ ավելի էժան, կամերալ ուսումնասիրություններով դաշտը կարգավորելու համար:

Բնական է, որ շատ կարևոր կլինի որպեսզի վերոհիշյալ փոփոխությունների քննարկումները իրականացվեն պետություն-մասնավոր հատված պատշաճ երկխոսության մակարդակներում: Հաշվի առնելով, որ վերահսկողական գործառույթների հզորացումը ընդունելի չէ աշխարհում ոչ մի բիզնես համայնքի: Կարևոր է, որ այս ոլորտի փոփոխությունները քննարկման առարկա դարձնել թե արհմիությունների կոնֆեդերացիայի և թե հակառակ կողմի բիզնես միությունների հետ համատեղ: